ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Կարեն Աբրահամյան 13.12.2024 15:37:32	2025 թվականին հետվճարի չափը(12տոկոս) հնարավո՞ր է ավելացվի:	Կառավարության 08.08.2024 թվականի N 1256-Լ որոշմամբ՝ արդեն իսկ սահմանվել է տվյալ ամսում վճարման ենթակա հետվճարը հաշվարկել այդ ամսվան նախորդող ամսում կատարած անկանխիկ գնումների և վճարումների գործարքների 12%-ի չափով՝ 10%-ի փոխարեն: Ըստ այդմ, 2025 թվականին անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի գումարի ավելացում ներկայումս չի նախատեսվում:	

2	Կարեն Աբրահամյան 13.12.2024 15:37:32	Առաջարկում եմ վերականգնել կոմունալ ծառայությունների դիմաց հետվճարը:	Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու միջոցառման նպատակներից մեկը տնտեսության ստվերային շրջանառության կրճատմանը նպաստելն է: Այս տեսանկյունից կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից հետվճար հաշվարկելը չի ծառայում միջոցառման՝ նշված նպատակի իրականացմանը: Ուստի նպատակահարմար է կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից հետվճար չհաշվարկել:	